  

# ՀՈՒՆԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նատալի Մնացականյան, Մարի Հարությունյան

# Ի՞նչ է իրենից ներկայացնում հունական դիցաբանությունը

- Հունական դիցաբանությունը հին հույների առասպելաբանությունն ու դիցաբանությունն է, նրանց հավատալիքների, ծիսակատարությունների, աստվածների և աստվածությունների մասին բազմազան պատմությունների ամբողջությունը: Այս պատմությունները վերաբերում են աշխարհի ծագմանը և բնույթին, աստվածությունների, հերոսների և դիցաբանական արարածների կյանքին և գործունեությանը, ինչպես նաև հին հույների սեփական պաշտամունքի և ծիսական պրակտիկայի ծագմանը և նշանակությանը:



Զևսի ծնունդը

# Զևսի ծնունդը

- Քրոնոսը վստահ չէր, որ իշխանությունն ընդմիշտ կմնա իր ձեռքում: Նա երկյուղ ուներ, որ իր դեմ կապստամբեն զավակները և իրեն կդատապարտեն նույն ճակատագրին, որին ինքը արժանացրեց իր հորը՝ Ուրանոսին: Նա վախենում էր իր զավակներից: Եվ հրամայեց Քրոնոսն իր կնոջը՝ Հռեային, որ նա իր մոտ բերի ծնած երեխաներին, և անգթորեն կուլ տվեց նրանց: Սարսափեց Հռեան իր զավակներին վիճակված ճակատագիրը տեսնելով:
- Հինգին Քրոնոսն արդեն կուլ տվեց՝ Հեստիային, Դեմետերին, Հերային, Հադեսին և Պոսեյդոնին:
- Հռեան չուզեց իր վերջին մանկանն էլ կորցնել: Իր ծնողների՝ Ուրանոս-Երկնքի և Գեա-Երկրի խորհրդով նա հեռացավ, գնաց Կրետե կղզի, և խորունկ մի անձավում ծնվեց նրա կրտսեր որդին՝ Զևսը:

# Զևսի ծնունդը

- Այդ անձավում նա թաքցրեց իր որդուն դաժան հորից և որդու փոխարեն բուրուրի մեջ փաթաթված մի երկարուկ քար տվեց նրան, որ կուլ տա: Քրոնոսը չկասկածեց, որ խաբված է կնոջից:
- Իսկ Զևսը մեծանում էր Կրետեում: Հավերժահարսներ Ադրաստեան և Իդեան գուրգուրում էին փոքրիկ Զևսին, նրան սնում էին Ամալթեա աստվածային այծի կաթով: Մեղուները փոքրիկ Զևսի համար մեղր էին բերում Դիկտե բարձր լեռան լանջերից: Իսկ անձավի մուտքի մոտ հսկում էին պատանի կուրետները, և ամեն անգամ, երբ փոքրիկ Զևսը լաց էր լինում նրանք սրերով խփում էին վահաններին, որպեսզի Քրոնոսը չլսի նրա լացի ձայնը, և Զևսին էլ չվիճակվի նրա եղբայրների ու քույրերի ճակատագիրը:
- Զևսը տապալում է Քրոնոսին և ազատում իր քույրերին և եղբայրներին՝ Հեստիային, Դեմետերին, Հերային, Հադեսին և Պոսեյդոնին:



# Պոսեյդոնը և ծովի աստվածությունները

# Պոսեյդոնը և ծովի աստվածությունները

- Ծովի հորձանուտի խորքում  կանգնած է ամպրոպային Զևսի եղբոր՝ երկրասասան մեծ Պոսեյդոնի զարմանահրաշ պալատը: Տիրում է Պոսեյդոնը ծովերին, և ծովի ալիքները ենթարկվում են ահեղ եռաժանիով զինված նրա ձեռքի մինչև իսկ ամենաթեթև շարժմանը: Այնտեղ՝ ծովի խորքում, ապրում է Պոսեյդոնը իր գեղանի կնոջ Ամփիտրիտեի՝ ծովային գուշակ, ծիրանազարդ, Ներևսի դստեր հետ: Պոսեյդոնը Ամփիտրիտեին առևանգել է Ներևսի մոտից: մի անգամ տեսել է, թե Ներևսի դուստրն ինչպես է իր քույրերի հետ շուրջ պար բռնել Նաքսոս կղզու ափին:

- Ծովի հորձանուտի խորքում  կանգնած է ամպրոպային Զևսի եղբոր՝ երկրասասան մեծ Պոսեյդոնի զարմանահրաշ պալատը: Տիրում է Պոսեյդոնը ծովերին, և ծովի ալիքները ենթարկվում են ահեղ եռաժանիով զինված նրա ձեռքի մինչև իսկ ամենաթեթև շարժմանը:

# Պոսեյդոնը և ծովի աստվածությունները

- Այնտեղ՝ ծովի խորքում, ապրում է Պոսեյդոնը իր գեղանի կնոջ Ամֆիտրիտեի՝ ծովային գուշակ, ծիրանազարդ, Ներևսի դստեր հետ: Պոսեյդոնը Ամֆիտրիտեին առևանգել է Ներևսի մոտից: մի անգամ տեսել է, թե Ներևսի դուստրն ինչպես է իր քույրերի հետ շուրջ պար բռնել Նաքսոս կղզու ափին: Գերվել է ծովի աստվածը սքանչելի Անֆիտրիտեով և կամեցել տանել նրան իր երկանվով: Բայց խուսափել է Անփիտրիտեն իրեն հետապնդող աստծուց և ապաստան գտել տիտան Ատլասի մոտ, որն իր հզոր ուսերի վրա պահում է երկնակամարը: Երկար ժամանակ Պոսեյդոնը չէր կարողացել գտնել Ներևսի գեղանի դստերը: Ի վերջը, նրա ապաստարանի տեղը հայտնել է դելֆինը. այդ ծառայության համար Պոսեյդոնը դելֆինին դասել է երկնային համաստեղությունների մեջ: Պոսեյդոնը Ատլասի մոտից հափշտակել է Ներևսի գեղանի դստերը և ամուսնացել նրա հետ:



Հերա

# Հերա

- Մեծ դիցուհի Հերան՝ Զևսի կինը, հովանավորում է ամուսնությունը և պահպանում ամուսնական կապերի սրբությունն ու անխախտությունը: Նա ամուսիններին բազմաքանակ ժառանգներ է ուղարկում և բարեմախթում է մայրերին՝ երկունքի ժամանակ:
- Մեծ աստվածուհի Հերային, հենց որ նրան, իր եղբայրների ու քույրերի հետ միասին, բերանից դուրս թափեց Զևսի կողմից պարտված Քրոնոսը, մայրը՝ Հռեան, տարավ երկրի ծայրը՝ ալեհեր Օվկիանոսի մոտ: Այնտեղ Հերային դաստիարակեց Թեմիսը: Երկար ապրեց Հերան Օլիմպոսից հեռու, անդորրության ու լռության մեջ: Շանթարձակ մեծն Զևսը տեսավ նրան, և փախցրեց Թեմիսի մոտից:

# Հերա

- Երկար ժամանակ Զևսը թաքցնում էր իր ամուսնությունը Հերայի հետ: Ի վերջը, նա աստվածներին հայտնեց, թե ով է իր կինը: Աստվածները ճոխ հարսանիք արեցին: Իրիսը և քարիսները Հերային շքեղազարդ հագցրին և նա Օլիմպոսի բազում աստվածների մեջ շողում էր իր վսեմաշուք դեռատի գեղեցկությամբ: Նա բազմել էր ոսկե հուռ գահի վրա՝ աստվածների ու մարդկանց մեծ արքա Զևսի կողքին: Բոլոր աստվածները նվերներ էին բերում Հերային, իսկ Երկիր Գեան, իբրև նվեր Հերային, իր ընդերքից աճեցրեց մի հրաշք խնձորենի՝ ոսկե պտուղներով:

ՎԵՐՋ